

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ**  
**ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ**  
**ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ**  
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**N 8/12**

Քաղ. Երևան

28 մարտի 2012թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Բաբայան, Ա.Հ. Աբգարյան, Ա.Գ. Շահինյան և Ա. Ի.Ղարիբջանյան (քարտուղար) իր 2012թ. մարտի 28-ի նիստում (արձանագրություն N 3.3) քննարկեց «Driga Kolinkska» ընկերության ներկայացուցիչ Ս. Կնայազյանի կողմից 2012թ. մարտի 5-ին ներկայացված «BEBI JUNIOR» (հայտի համարը N 1049312) համակցված ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Մերժման հիմք են հանդիսացել «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետը և «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու կարգի» 106.1.ա կետը, համաձայն որոնց որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Բողոքարկված նիշը ենթակա չէ գրանցման ՀՀ-ում նույնատիպ ապրանքների համար գրանցման հիման վրա պահպանվող շփոթելու աստիճան նման «JUNIOR» («Անուշ լինի» ՍՊԸ, Երևան, Մասիսի 50, աս, AM N 9763) ավելի վաղ ապրանքային նշանի առկայության պատճառով:

Բողոքարկողը համաձայն չէ Գործակալության դիրքորոշման հետ և գտնում է, որ գրանցված նշանը չի կարող խոչընդոտ հանդիսանալ բողոքարկվող նշանի գրանցման համար,

քանի որ նրանք նման չեն, ինչպես նաև տարբեր են նրանց օգտագործման եղանակները, այդ նշանները կրող ապրանքատեսակները և դրանց սպառման վայրերը:

Բողոքում նշված է, որ համաձայն «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու կարգի» (այսուհետ՝ Կարգ) Նշանների նմանության աստիճանի վրա ազդեցություն է թողնում նաև համընկնող և չհամընկնող տարրերի հարաբերակցությունը, ինչպես նաև՝ դրանց նշանակությունը նշանի ընդհանուր հորինվածքում: Բողոքարկողը պնդում է, որ քննարկվող Նշաններում առկա են բազմաթիվ չհամընկնող տարրեր, իսկ համընկնող տարրերն իսպառ բացակայում են, քանզի համեմատվող նշաններում առկա է միայն մեկ նման, սակայն չհամընկնող տարր: Խոսքը վերաբերում է «Junior» բառին, որը նման է, սակայն չի համընկնում Հայտարկված Նշանում օգտագործված բառի հետ, քանզի վերջինս ոչ թե իրենից ներկայացնում է պարզապես ստանդարտ լատինատառ բառ (ինչպես Գրանցված Նշանն է), այլ հանդիսանում է յուրօրինակ գեղարվեստական լուծում (բառապատկերային տարրերի համակցության արդյունք): Այն, մասնավորապես, միաձուլված է մի պատկերի հետ, որը հիշեցնում է թռչող թիթեռ: Հենց այդ միաձուլվածության պատճառով միջին հայ սպառողը (որի մեծ մասն անգլերեն լեզվին նույնիսկ չի էլ տիրապետում) չի կարող Հայտարկված Նշանում տեսնել «Junior» բառ: Միջին հայ սպառողը, «Bebi» բառից և թիթեռ հիշեցնող պատկերից բացի, լավագույն դեպքում, կարող է տեսնել «unior» բառ, քանզի միջին հայ սպառողի մտքով նույնիսկ չի անցնի, որ թիթեռ հիշեցնող պատկերի ներքևի հատվածը հիշեցնում է լատինական «j» տառը: Հետևաբար, քիչ հավանական է, որ միջին հայ սպառողը նույնիսկ նկատի «Junior» բառը և Հայտարկված Նշանը շփոթի Գրանցված նշանի հետ:

Բողոքարկողը նշում է, որ Հայաստանի միջին հայ սպառողը չի կարող շփոթել վերոգրյալ երկու ապրանքային նշաններն այն պարզ պատճառով, որ Գրանցված Նշանը երբևէ չի էլ դրվել տնտեսական շրջանառության մեջ և այդ պատճառով այն նույնիսկ հայտնի չէ սպառողին, մինչդեռ Հայտարկված Նշանը ոչ միայն գտնվում է օգտագործման մեջ, այլ նաև այդ նշանը կրող ապրանքները ներկայումս վաճառվում են Երևան քաղաքի և Հայաստանի մի շարք մարզերի դեղատներում: Միայն Երևանում, Հայտարկված Նշանը կրող ապրանքներ վաճառվում են ավելի քան 12 դեղատներում, որոնց մի մասը գտնվում է մեծ սուպերմարկետներում: Բացի այդ, տվյալ դեպքում, սպառողը հնարավորություն չունի համեմատելու երկու նշանները, իսկ եթե առաջնորդվի նախկինում տեսած նշանի մասին ունեցած իր ընդհանուր տպավորությամբ, ապա նախկինում տեսած նշանը կարող է լինել միայն Հայտարկված Նշանը, քանզի Գրանցված Նշանը երբևէ (այդ թվում վերջին հինգ տարիների ընթացքում) որևէ կերպ չի օգտագործվել:

Բողոքարկողը, մեջբերելով առկա փաստերը և կատարելով իրավական վերլուծություն, պնդում է, որ համեմատվող նշանների միջև կան ակնհայտ տարբերություններ, ինչպես նաև տնտեսական շրջանառությունում դրանց օգտագործման եղանակները բավարար են սպառողների մոտ շփոթություն չստեղծելու համար: Նշում է նաև, որ համեմատվող նշանների միջև բացակայում է շփոթելու աստիճան այնպիսի նմանությունը, որը կարող է շփոթեցնել Հայաստանի սպառողներին և հիմք հանդիսանալ Հայտարկված Նշանի գրանցումը մերժելու համար:

Ի հավելումն, ներկայացված փաստարկների և իրավական վերլուծության, բողոքարկողը նշում է, որ Գրանցված նշանի իրավատեր «Անուշ լինի» ՍՊԸ-ի կողմից Հայտարկված նշանի իրավատիրոջը տվել է գրավոր համաձայնություն՝ «JUNIOR» բառը Հայտարկված նշանում օգտագործելու համար, և սեփականատերը դեմ չէ որ Հայտարկված նշանը գրանցվի Հայաստանում:

Ամփոփելով իր գրությունը՝ բողոքարկողը խնդրում է չեղյալ ճանաչել հայտարկված ապրանքային նշանի կրկնական փորձաքննության մասին Գործակալության 21.12.2011թ.-ի որոշումը և բավարարել « Droga Kolinska» ընկերության բողոքը՝ գրանցելով թիվ 1049312՝ «BEBI JUNIOR» ապրանքային նշանը 30-րդ դասի համար:

Կոլեգիայի անդամը բողոքը ներկայացնելիս նշեց, որ 2012թ. մարտի 5-ին «Driga Kolinkska» ընկերության ներկայացուցիչ Ս. Կնայազյանի կողմից ներկայացվել է «Bebi Junior» (հայտի համարը N 1049312) համակցված ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոք: Համառոտ ներկայացվեց մերժման հիմքը: Նշվեց նաև, որ բողոքարկողը իր գրության մեջ ամրագրել է Գրանցված և Հայտարկված ապրանքային նշանների միջև նմանությունը և տարբերությունը, ինչպես նաև իրականացրել է իրավական վերլուծություն՝ արձանագրելով, որ գրանցված ապրանքային նշանը վերջին հինգ տարվա ընթացքում չի օգտագործվել: Կոլեգիայի անդամի կողմից նշվեց, որ բողոքին կից ներկայացված է համաձայնագիր, համաձայն որի Գրանցված նշանի իրավատերը համաձայն է, որպեսզի «JUNIOR» բառը օգտագործվի Հայտարկված ապրանքային նշանում:

Հիմքը ընդունելով բողոքարկողի փաստարկները և Գրանցված ապրանքային նշանի իրավատիրոջ համաձայնության մասին հայտարարությունը՝ կոլեգիան առաջարկեց բողոքը բավարարել մասնակի, այսինքն, հայտարկված ապրանքային նշանը գրանցել միայն այն ապրանքների համար, որոնց նկատմամբ առկա է Գրանցված ապրանքային նշանի իրավատիրոջ համաձայնությունը:

Բողոքարկման խորհուրդը, ընդհանուր վերլուծության արդյունքում, համաձայնվեց կոլեգիայի առաջարկի հետ, նշելով որ բողոքարկողի ներկայացրած Գրանցված ապրանքային նշանի համաձայնության մասին հայտարարությունը, բավարար հիմք է որպեսզի բողոքը բավարարվի մասնակի:

Ընդհանուր քննարկման արդյունքում, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 68-րդ կետի 1-ին ենթակետով բողոքարկման խորհուրդը

### Ո Ր Ո Շ Ե Ց

Չեղյալ ճանաչել N1049312 միջազգային գրանցում ունեցող «BEBI JUNIOR» ապրանքային նշանին միջազգային գրանցման մեջ նշված ապրանքների պահպանության տրամադրումը նախնական մերժման մասին Գործակալության 09.09.2011թ. և կրակնական փորձաքննության՝ 21.12.2011թ. որոշումները, պահպանություն տրամադրել «BEBI JUNIOR» ապրանքային նշանին 30-րդ դասի ալյուր և քուլայից պատրաստված պատրաստուկներ, հաց, մեղր, մաթ. խմորիչ, փխրեցուցիչ, չորացած մրգերի և վարսակի քուլայի (փաթիլների) խառնուրդ, փաթիլներ (քուլայից պատրաստված ապրանքներ), ցորենի փաթիլներ (քուլա), եգիպտացորենի փաթիլներ, բրնձի փաթիլներ, տարբեր տեսակի ապրանքատեսակներ, որոնք ներառում են շոկոլադ, և/կամ մեղր, և/կամ պնդուկ, և/կամ ընկույզ, բուսական ( ոչ բուժիչ թեյեր) ապրանքների համար:

Բողոքարկման խորհրդի  
նախագահ

Ա. Ազիզյան